ԿԱՐԾԻՔ

Շահեն Շանթի Հարությունյանի «Քաղաքական այլախոհությունը Խորհրդային Հայաստանում 1960–1980-ական թթ. կեսերին» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Թեմայի արդիականությունը և գիտական նշանակությունը

Տասնամյակներ շարունակ խորհրդահայ պատմագրության շրջանակներում Խորհրդային Հայաստանում ձևավորված քաղաքական այլախոհության խնդիրը մնացել է գրեթե լիովին լուսանցքում՝ դիտարկվելով որպես գաղափարապես անընդունելի կամ քաղաքականապես ոչ նպատակահարմար թեմա: Հայաստանի անկախացումից հետո այս թեման այլևս «փակ» չէր համարվում. սկսեցին լույս տեսնել առաջին հուշագրական և փաստագրական աշխատությունները, որոնց հեղինակները հիմնականում այն անհատներն էին, որոնք իրենց կենսագրությամբ անմիջապես կապ ունեն այդ շարժման հետ: Սակայն այդ նախաձեռնությունները, լինելով արժեքավոր փաստավավերագրական աղբյուրներ, առայժմ չեն ձևավորել թեմայի համակողմանի գիտական ըմբռնումը: Այս համատեքստում Շահեն Հարությունյանի կողմից ընտրված թեման ակնհայտորեն արդիական է՝ հատկապես այն տեսանկյունից, որ նպատակ ունի վերլուծել Հայաստանի անկախության նախապատմությունը, քաղաքական մտածողության ազգային առանձնահատկությունները և ազատության գաղափարի պատմական զարգացումն ու փոխանցումը հաջորդ սերունդներին: Հեղինակն ընդգծում է, որ հայ քաղաքական այլախոհությունը խորհրդային համակարգում ունեցել է ազգային և անկախությանը նպատակաուղղված բնույթ, ինչը կարևոր տարատեսակ շերտավորում կարելի է համարել այլ միութենական հանրապետությունների համեմատությամբ:

Ատենախոսության թեման առավել քան արդիական է՝ թե՛ Հայաստանի պատմության նորագույն շրջանի լիարժեք վերլուծության տեսանկյունից, և թե՛ ազգային ինքնության ու արժեքային համակարգի վերաիմաստավորման ներկայիս գործընթացների համատեքստում: Խորհրդային տարիներին ձևավորված քաղաքական այլախոհության շարժումները՝ որպես հասարակական դիմադրության յուրօրինակ ձև, առանցքային դեր են ունեցել հետագա անկախության գաղափարի ձևավորման գործում: Այս ամենի գիտական վերլուծության ու արժևորման փորձը կարևոր քայլ է անկախ պետականության գիտակցության աստիճանական զարգացման և ամրապնդման ճանապարհին:

Ատենախոսության կառուցվածքը, բովանդակությունը և գիտական նորույթը

Ատենախոսությունը կազմված է տրամաբանական հաջորդականությամբ՝ ներածությունից մինչև եզրակացություն: Չորս հիմնական գլուխներից յուրաքանչյուրը տարանջատում է քաղաքական այլախոհության փուլերը՝ գաղափարական հիմքերից մինչև կազմակերպությունների

զարգացումը, անհատական դրսևորումներից մինչև պետական հակազդեցություններ: Մեթոդաբանական առումով աշխատությունը կառուցված է պատմական, համեմատական, վերլուծական և հոգեբանական մոտեցումների համադրությամբ:

Հեղինակը նաև ցուցաբերել է համապատասխան վերլուծական մոտեցում՝ զուգակցելով ներքին զարգացումները ԽՍՀՄ գլոբալ համատեքստի, հատկապես՝ Սառը պատերազմի գաղափարախոսական դիմակայության հետ:

Հատկանշական է հեղինակի իրականացրած աղբյուրագիտական լայն վերլուծությունը՝ պետական և անձնական արխիվային նյութերի, հարցազրույցների միջոցով բանավոր պատմության, ընդհատակյա պարբերականների, անտիպ հուշագրությունների, ինչպես նաև՝ արևմտյան մամուլի նյութերի հիման վրա:

Հեղինակը փորձել է ամբողջացնել Խորհրդային Հայաստանի քաղաքական այլախոհության պատմության ուսումնասիրությունը՝ հիմնվելով ոչ միայն հրապարակված գրականության, այլ նաև՝ անձնական արխիվային նյութերի, հարցազրույցների, ընդհատակյա տպագրությունների և բանտային փաստաթղթերի վրա: Այս բազմաշերտ աղբյուրագիտական հենքը ապահովում է աշխատանքի գիտական արժանահավատությունը և խորությունը: **Գիտական նորույթը** դրսևորվում է ոչ միայն փաստաթղթերի և հարցազրույցների նորահայտ նյութերի գիտական շրջանառության մեջ դնելով: Հեղինակը նաև համակարգել է հայկական այլախոհության երեք հիմնական գաղափարական ուղղությունները՝ հողային պահանջատիրություն և ցեղասպանության բարձրաձայնում, անկախության վերականգման պայքար և մարդու իրավունքների պաշտպանություն: Այս դասակարգումն ինքնին մեթոդաբանական ներդրում է թեմայի ուսումնասիրության գործում:

Դրական արժանիքներ

Ատենախոսության կարևորագույն արժանիքներից է հետևողական վերլուծական հենքի վրա կառուցված քաղաքական այլախոհության ինստիտուցիոնալ և գաղափարական դրսևորումների համակարգումը: Հեղինակը դիտարկում է ինչպես «Հայ երիտասարդական միություն», «Հայաստանի վերամիավորման շարժում», «Ազգային միացյալ կուսակցություն», «Հայաստանի Հելսինկյան խումբ» կազմակերպությունների, այնպես էլ՝ անհատների՝ Պարույր Հայրիկյանի, Վարդան Հարությունյանի, Շահեն Հարությունյանի, Մարզպետ Հարությունյանի, Հայկազ Խաչատրյանի և այլոց գործունեությունը:

Այս առումով ուշագրավ են թե՛ մանրամասն փաստաթղթային աղբյուրները, թե՛ բանավոր վկայություններն ու հարցազրույցները, որոնք թույլ են տալիս դիտարկել շարժման ոչ միայն ինստիտուցիոնալ, այլև **հոգեբանական, սոցիալական և մտավոր** հիմքերը:

Հեղինակը ճշգրիտ ցույց է տալիս, որ հայկական այլախոհությունը ԽՍՀՄ-ում ուներ յուրահատուկ բովանդակություն՝ կապված ոչ միայն իրավապաշտպան կամ քաղաքացիական ազատությունների պաշտպանության, այլև **պետական անկախության, հողային պահանջատիրության և ցեղասպանության ճանաչման** հետ: Այս գաղափարները հեղինակը օրգանապես զուգադրում է ազգային ինքնագիտակցության վերականգնման գործընթացին:

Ատենախոսությունում հստակ ներկայացված է Մոսկվայի և Կարսի պայմանագրերի իրավաքաղաքական վերլուծությունը՝ որպես այլախոհության պատմական հիմք: Սա նոր հարթության վրա է դնում քաղաքական այլախոհությունը՝ այն դիտարկելով ոչ միայն որպես գաղափարախոսական կամ բարոյական ընդվզում, այլ որպես իրավաքաղաքական դիմադրություն:

Բացահայտված է ՊԱԿ 5-րդ վարչության քաղաքական դերը՝ այլախոհության ճնշման համատեքստում, վերլուծաբար համադրված են հայ դիսիդենտների՝ Պ. Հայրիկյանի, Վ. Հարությունյանի, Ա. Արշակյանի, Մ. Հարությունյանի և այլոց անհատական պատմությունները: Հեղինակը հստակ երևան է հանում այն, որ ԽՍՀՄ իշխանությունները 1950-60-ականներից ոչ միայն այլախոհությունը չէին հանդուրժում, այլև դիմում էին համակարգված ճնշումների՝ սկսած ՊԱԿ 5-րդ վարչության ռեպրեսիվ գործողություններից ավարտած հոգեբուժարաններ ուղարկելու մեխանիզմները:

Հատկանշելի է աշխատության համադրական դիտարկումը Սառը պատերազմի գաղափարական գոտիների հետ, ինչը ցույց է տալիս, որ հայ դիսիդենտները գործել են ոչ թե արտաքին ազդեցությամբ, այլ սեփական ազգի ազատության ձգտմամբ: Սառը պատերազմի և այլախոհության փոխհարաբերության վերլուծությամբ հեղինակը ապացուցում է, որ հայ այլախոհները ոչ թե Արևմուտքի գործակալներ էին, այլ պայքարում էին համընկնող արժեքների համատեքստում, ինչն առավել է արժևորում նրանց պայքարը:

Արտահայտման ոճը և տեքստային արժեքները

Ատենախոսության տեքստը հիմնականում համապատասխանում է գիտական գրավոր խոսքի պահանջներին՝ պահպանելով ակադեմիական ոճի կառուցվածքային և լեզվաոճական չափանիշները: Տեքստը հագեցած է փաստարկված վերլուծություններով, հղումներով և պատմագիտական նյութերի համադրությամբ: Հեղինակը հաջողությամբ կարողացել է գիտական

խոսքի շրջանակներում փոխանցել իր գաղափարները՝ խուսափելով թե՛ պաթոսային, թե՛ չափազանց գործնական լեզվից, միևնույն ժամանակ չվնասելով թեմայի կարևորության ներքին լիցքը: Բանաձևումներն, ընդհանուր առմամբ, հասկանալի են, միտքը՝ հստակ կառուցված:

Ատենախոսությունն աչքի է ընկնում կառուցվածքային կազմակերպվածությամբ. բաժինների և ենթաբաժինների տրամաբանական հաջորդականությունը նպաստում է նյութի ընկալելիությանը: Աղբյուրագիտական բազան տարաբնույթ է՝ ընդգրկելով ինչպես դասական պատմագիտական գրականություն, այնպես էլ անձնական հուշագրություններ, հարցազրույցներ, ընդհատակյա մամուլի նյութեր և արխիվային փաստաթղթեր: Նման բազմաշերտությունն ապահովում է աշխատության վավերագրական հիմքի ամբողջականությունը և նպաստում գիտական թեզերի հիմնավորմանը:

Այնուամենայնիվ, առկա են որոշ լեզվաոճական և շարահյուսական անճշտություններ, որոնք տեղին կլիներ վերանայել նախահրատարակչական խմբագրման շրջանակում:

Թերություններ և դիտարկումներ

Թեև նախորդիվ հատկանշել ենք աշխատանքի ընդհանուր բարձր մակարդակը, օգտակար ենք համարում նշել մի քանի դիտարկում՝ իբրև բարելավման առաջարկ.

1. Մեկնաբանական խորության որոշ բացակայություն մի քանի ենթագլուխներում, օրինակ, երբեմն ավելի շատ փաստական շարադրանք կա, քան դրանց համադրումն ու վերլուծությունը:

Որոշ հատվածներում փաստական շարադրանքը այնքան է հագեցած գնահատականներով, որ ընթերցողը դժվարանում է տարբերել աղբյուրի փաստը հեղինակի մեկնաբանությունից: Հաճախակի օգտագործվող որոշ եզրույթներ զգում են նաև հանրամատչելի հասկացությունների սահմանման կարիքը:

2. Սոցիալական համատեքստի բացակայություն որոշ հատվածներում, օրինակ, հեղինակը կարող էր խորացնել հանրային արձագանքի, մենթալիտետի, գրականության և մշակույթի դերի հարցերը այլախոհության ձևավորման գործում:

Հետաքրքիր կլիներ, եթե հեղինակը բացեր շարժման սոցիալական բազան՝ ավելի կոնկրետ ու խորքային ներկայացներ, թե ինչ սոցիալական շերտերից էին գալիս ակտիվիստները, ինչ կրթական, դասակարգային, մշակութային նախադրյալներ ունեին:

3. Առանձին կերպարների դատավճիռներին անդրադարձով հանդերձ, տեղ է մնացել ընդհանուր պետական մեխանիզմների՝ խոշտանգումների, քարոզչության, ճնշումների համապարփակ նկարագրի համար: Ըստ էության պակասում է իշխանությունների պատասխան քաղաքականության ինստիտուցիոնալ մոդելի ամբողջական ներկայացումը:

3. Որոշ աղբյուրների բազային հնարավոր էր ակադեմիական կշիռ հաղորդել, օրինակ՝ առանձին հղումների թվարկման հստակեցում կամ տեքստում դրանց ակտիվ վերլուծություն:

4. Անգլալեզու միջազգային գիտական գրականության կիրառության ծավալը համեմատաբար սահմանափակ է: Հեղինակը կարող էր ընդգրկել ավելի լայն համեմատական շրջանակ՝ նույն ժամանակաշրջանի այլախոհության շարժումների համեմատության տեսանկյունից (Լեհաստան, Չեխոսլովակիա, Հունգարիա):

Տեխնիկական թերություններ

Տառասխալներ նկատվում են մի շարք էջերում, օրինակ՝ էջ 95 («ներրգրավվել են», պետք է՝ «ներգրավվել են»), էջ 16 («Խրուշչյովը», պետք է՝ «Խրուշչովը»), էջ 14 («Բոլշևիկյան իշխանությունների», պետք է՝ «բոլշևիկյան իշխանությունների», «Կոմունիստական գաղափարախոսությունը», պետք է՝ «կոմունիստական գաղափարախոսությունը»), էջ 107 («այնունամենայնիվ», պետք է՝ «այնուամենայնիվ»):

Սեղմագրի **«Աշխատանքի կառուցվածքը և ծավալը»** կետում նշված «հավելվածը» (էջ 10) ատենախոսությունում բացակայում է:

Լեզվաոճական անհարթություններ են նկատվում հետևյալ հատվածներում՝ էջ 14 (*«Թվում էր, թե տարիների ընթացքում տարածաշրջանի երկրների **ժողովուրդները**, որոնք **դարձան** ԽՍՀՄ-ի միութենական **հանրապետություններ**, հանդուրժող **կդառնան** և կընդունեն այս նոր գաղափարախոսությունն ու խորհրդային վարչակարգը, բայց ինչպես ցույց է տալիս խորհրդային կայսրության պատմությունը, Բոլշևիկյան իշխանությունների քաղաքականությունը կայսրության մեջ ընդգրկված ազգությունների համար, նրա որդեգրած **Կ**ոմունիստական գաղափարախոսությունը, մշտապես եղել են ապստամբությունների և դիմադրական շարժումներին առիթ»*), էջ 27 (*«Խորհրդային Հայաստանում ձևավորված տաբուների քաղաքականության հիմքերի խարխլումը թեև սկսվեց **Խ**րուշչովյան հալոցքի ժամանակ, սակայն հայկական միջավայրում կարծրատիպերի կոտրման և որոշակի պահանջատիրական զգացողությունների առաջացման և ինչ-որ տեղ բարձրաձայնման գործում, առանցքային նշանակություն է ունեցել խորհրդային իշխանության վերաբերմունքի փոփոխությունը վերոշարադրյալ հարցերի շուրջ»* — բարդ և շարահյուսորեն անհաջող ձևակերպում):

Իմաստաբանական անճշտություն կա՝ էջ 72-ում՝ «ընդհատակյա կուսակցություն» և «ընդհատակյա կազմակերպություն» եզրույթների տարանջատումը կարելի էր հստակեցնել, քանի որ երբեմն օգտագործվում են գրեթե համարժեք իմաստով (*Շահեն Հարությունյանն* (ավագը.- Մ.Հ.) *առաջարկում է ստեղծել կուսակցություն, այլ ոչ թե կազմակերպություն, նշելով, որ մինչ այդ*

կազմակերպություններ արդեն կային, և պետք էր ավելի կազմակերպված բնույթ հաղորդել այլախոհական շարժումներին և առանձնապես՝ անկախության համար պայքարին: Հայկազ Խաչատրյանի առաջարկով այլախոհական այս ***կազմակերպությունը*** *կոչվում է «Ազգային միացյալ* ***կուսակցություն*** (ընդգծումները՝ Մ.Հ.-ի)», *որը հիմնվում է 1966 թվականի հոկտեմբերին*):

Մեթոդաբանական առաջարկներ

Կարելի էր ուշադրություն դարձնել սոցիալական ֆոնի վերլուծությանը՝ մասնակիցների դասակարգային, տարիքային, կրթական պատկանելության նկարագրությամբ:

Թեև ատենախոսությունը ներկայացնում է քաղաքական այլախոհության բազմաշերտ դրսևորումներ և դրանց առանցքային դերակատար անձանց գործունեությունը, այն մեծապես կենտրոնացած է բացառապես արական կերպարների վրա: Նկատվում է կանանց մասնակցության փաստերի և վերլուծության բացակայություն, ինչը թեմային հաղորդում է միակողմանի՝ արական հերոսապատումի ընդգծված երանգ: Անկախ այն հանգամանքից, թե արդյոք սա պայմանավորված է աղբյուրների սահմանափակությամբ, դեպքերի փաստացի սակավությամբ կամ հետազոտական ընտրությամբ, այդուհանդերձ, ակնկալվում էր առնվազն հակիրճ անդրադարձ-բացատրություն, թե արդյոք կանանց բացակայությունը հայ այլախոհական շարժման մեջ խիստ բնութագրական երևույթ է, թե՞ ուղղակիորեն չլուսաբանված խնդիր: Այս բացը, եթե նույնիսկ օբյեկտիվորեն գոյություն ունի, արժանի էր որոշակի մեկնաբանության՝ զուտ գիտական ամբողջականության ապահովման տեսանկյունից:

Խորհրդային պետության հակազդեցության մեխանիզմների վերլուծությունը, թեև ատենախոսության մեջ որոշ չափով արտացոլված է, սակայն մնում է մասնակի և մեկ առանցքում՝ կենտրոնանալով ՊԱԿ-ի (պետանվտանգության կոմիտե) գործունեության վրա: Այն դեպքում, երբ քաղաքական այլախոհության ճնշման գործընթացը ԽՍՀՄ-ում եղել է բազմաօղակ և համակարգային՝ ներառելով նաև Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ), դատախազության, դատարանների, կրթական ու մշակութային հաստատությունների ներգրավումը, ատենախոսությունում այդ բաղադրիչների անդրադարձը բացակայում է կամ ներկայացված է մակերեսային: Մասնավորապես բացակայում է դատաիրավական համակարգի՝ որպես քաղաքական գործիքի օգտագործման վերլուծությունը՝ ինչպես նաև կրթական համակարգի՝ գաղափարական վերահսկողության գործառույթների և սոցիալական ճնշման մեխանիզմների լուսաբանումը: Այս ճյուղերի համադրական բացակայությունը նեղացնում է պետություն–այլախոհություն հարաբերության ամբողջական պատկերը և ստեղծում է մեկ մեկուսացված, ուժային գերակշիռ կառուցվածքի տպավորություն:

Եզրակացություն

Վերլուծելով Շահեն Շանթի Հարությունյանի ատենախոսության գիտական բովանդակությունն ու կառուցվածքը՝ կարելի է եզրահանգել, որ այն ինքնուրույն, աղբյուրային հարուստ և մեթոդաբանական առումով կառուցակարգված հետազոտություն է: Ատենախոսությունը բնութագրվում է փաստական ընդգրկմամբ, տեսականորեն հիմնավորված մոտեցումներով և դիտարկումների նորությամբ, որոնք լրացնում են Խորհրդային Հայաստանի քաղաքական այլախոհության ուսումնասիրության մեջ առկա բացերը:

Ատենախոսությունն ընդգծված գիտական արժեք ունի՝ հատկապես ԽՍՀՄ քաղաքական գաղափարախոսության, ազգային ինքնության և հասարակական դիմադրության փոխազդեցության վերլուծության համատեքստում: Այն ձևավորում է պատմագրական նոր խոսույթ՝ հիմնված ինչպես փաստավավերագրական, այնպես էլ վերլուծական մատուցման վրա:

Թեև աշխատանքում առկա են որոշ լեզվաոճական, մեթոդաբանական կամ թեմատիկ հղկման ենթակա կողմեր, դրանք չեն նսեմացնում ընդհանուր գիտական որակը և ներկայացված թեզերի արժեքը: Ընդհակառակը՝ դրանք տեսանելի են դարձնում հետագա խորացման հնարավոր ուղղությունները:

Հաշվի առնելով վերոնշյալ արժանիքները՝ կարող եմ արձանագրել, որ Շահեն Շանթի Հարությունյանի ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի 6-րդ և 7-րդ կետերին և պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման պահանջներին:

Հետևաբար, առաջարկում եմ «Քաղաքական այլախոհությունը Խորհրդային Հայաստանում 1960–1980-ական թթ. կեսերին» թեմայով ատենախոսությանը տալ դրական գնահատական և ատենախոս Շահեն Շանթի Հարությունյանին շնորհել Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն բաժնի
գիտաշխատողի պաշտոնակատար, պ.գ.թ., դոցենտ Մհեր Ալեքսանդրի Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոս պ.գ.թ., դոցենտ Մհեր Ալեքսանդրի Հարությունյանի
ստորագրությունը հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան
6.06.2025